



# Molina Dual Options Cal MediConnect Plan Medicare-Medicaid Plan | 2022թ. Առցանց Մատակարարների և դեղատների տեղեկատու

## Ներածություն

Այս *Մատակարարների և դեղատների տեղեկատու* ներառում է տեղեկություններ Molina Dual Options-ում մատակարարի և դեղատների տեսակների մասին և ծրագրի բոլոր մատակարարների և դեղատների ցուցակը՝ որոնման ենթակա առցանց գրացուցակի ներքևի էջում ցուցադրված ամսաթվի դրությամբ: Ցուցակները պարունակում են մատակարարի և դեղատան հասցեն և կոնտակտային տվյալները, ինչպես նաև այլ մանրամասներ, ինչպիսիք են՝ գործողությունների օրերը և ժամերը, մասնագիտությունները և հմտությունները: Հիմնական տերմինները և դրանց սահմանումներն այբբենական կարգով կարող եք գտնել *Մասնակցի ձեռնարկի* վերջին գլխում:

## Հրաժարում պատասխանատվությունից

- ❖ Molina Dual Options Cal MediConnect Plan Medicare-Medicaid Plan-ը բժշկական ապահովագրության ծրագիր է, որն իր վրա է վերցնում Medicare և Medi-Cal պարտականություններն՝ նպաստներ տրամադրելու երկու ծրագրերի մասնակիցներին:
- ❖ Molina Dual Options-ը համապատասխանում է գործող դաշնային օրենսդրությամբ սահմանված քաղաքացիական իրավունքներին և թույլ չի տալիս խտրականություն ըստ ռասայի, էթնիկ պատկանելության, ազգային ծագման, դավանանքի, սեռի, տարիքի, մտավոր կամ ֆիզիկական անաշխատունակության, առողջական վիճակի, առողջության ստացման, պահանջների փորձի, բժշկական պատմության, գենետիկական տեղեկատվության, ապահովագրության ապացույցների, աշխարհագրական դիրքի:
- ❖ Այս առցանց տեղեկատուի մեջ նշվում են առողջապահության ոլորտի մասնագետները (օրինակ՝ բժիշկներ, բուժքույրեր և հոգեբաններ), բուժհաստատությունները (օրինակ՝ հիվանդանոցներ կամ կլինիկաներ) և աջակցող մատակարարները (օրինակ՝ Մեծահասակների ցերեկային խնամքի առողջության և տնային խնամքի առողջության մատակարարներ), որոնք դուք

կարող եք տեսնել որպես Molina Dual Options-ի անդամ: Մենք նաև ցուցակագրում ենք այն դեղատները, որոնցից կարող եք օգտվել ձեզ նշանակված դեղերը ստանալու համար:

- ❖ Այս Տեղեկամատյանում մենք այս խմբերին կանդրադառնանք որպես «ցանցային մատակարարներ»: Այս մատակարարները պայմանագիր են կնքել մեզ հետ՝ ձեզ ծառայություններ մատուցելու համար: Այս առցանց տեղեկամատյանը պարունակում է Կալիֆոռնիա նահանգի Molina Dual Options-ի մատակարարների ամբողջ ցանցը: Չանգահարեք Molina Dual Options-ի Անդամի սպասարկման կենտրոն՝ (855) 665-4627 (TTY 711), երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով:
- ❖ Այս տեղեկամատյանում ընդգրկված են ինչպես Medicare, այնպես էլ Medi-Cal ծառայություններ մատուցողները:
- ❖ ATTENTION: If you speak English, language assistance services, free of charge, are available to you. Call (855) 665-4627, TTY: 711, Monday - Friday, 8 a.m. to 8 p.m., local time. The call is free.
- ❖ ATENCIÓN: Si habla español, tiene a su disposición servicios gratuitos de asistencia lingüística. Llame al 1-855-665-4627 de lunes a viernes, de 8:00 a. m. a 8:00 p. m. Los usuarios de TTY deben llamar al 711. La llamada es gratuita.
- ❖ 如果您使用繁體中文，您可以免費獲得語言援助服務。請致電 1-855-665-4627（服務時間：週一至週五上午 8:00 至下午 8:00）。TTY 使用者應該致電 711。該電話免費。
- ❖ Kung nagsasalita ka ng Tagalog, maaari kang gumamit ng mga serbisyo ng tulong sa wika nang walang bayad. Tumawag sa 1-855-665-4627, Lunes hanggang Biyernes mula 8:00 am hanggang 8:00 pm. Para sa mga user ng TTY, dapat tumawag sa 711. Libre ang tawag.
- ❖ Nếu bạn nói Tiếng Việt, có các dịch vụ hỗ trợ ngôn ngữ miễn phí dành cho bạn. Gọi số 1-855-665-4627, Thứ Hai đến thứ Sáu từ 8:00 giờ sáng đến 8:00 giờ tối. Người dùng TTY cần gọi số 711. Cuộc gọi này miễn phí.
- ❖ 한국어를 사용하시는 경우, 언어 지원 서비스를 무료로 이용하실 수 있습니다. 1-855-665-4627번으로 월요일 - 금요일, 오전 8시부터 오후 8시 사이에 전화해 주십시오. TTY 이용자는 711번으로 전화하십시오. 통화료는 무료입니다.
- ❖ Если вы говорите на русском языке, то вам доступны бесплатные услуги перевода. Звоните 1-855-665-4627, понедельник — пятница, с 8:00 до 20:00. TTY для лиц с нарушениями слуха 711. Звонок бесплатный.
- ❖ Եթե խոսում եք հայերեն, սպա ձեզ անվճար կարող են տրամադրվել լեզվական աջակցության ծառայություններ: Չանգահարեք 1-855-665-4627 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից՝ 20:00: TTY օգտվողները պետք է զանգահարեն 711: Չանգն անվճար է:

❖ ប្រយ័ត្ន: បើសិនជាអ្នកនិយាយភាសាខ្មែរ, សេវាជំនួយផ្នែកភាសា ដោយមិនគិតល្អល គឺអាចមានសំរាប់បំរើអ្នក។ ចូរ ទូរស័ព្ទ 1-855-665-4627 នៅថ្ងៃច័ន្ទ ដល់ ថ្ងៃសុក្រ ចាប់ពីម៉ោង 8:00 ព្រឹក ដល់ 8:00 យប់។ អ្នកប្រើ TTY គួរហៅទូរស័ព្ទទៅលេខ 711។ ការហៅទូរស័ព្ទនេះគឺឥតគិតថ្លៃ។

❖ اگر به زبان فارسی گفتگو می کنید، تسهیلات زبانی بصورت رایگان برای شما فراهم می باشد. با 1-855-665-4627 روزهای دوشنبه تا جمعه از 8 صبح تا 8 عصر تماس بگیرید. افرادی که دارای مشکل شنوایی هستند با شماره 711 تماس بگیرید. برقراری تماس رایگان است.

❖ ملحوظة: إذا كنت تتحدث اذكر اللغة، فإن خدمات المساعدة اللغوية تتوافر لك بالمجان. اتصل برقم 1-855-665-4627 (رقم هاتف الصم والبكم: 711) من الاثنين حتى الجمعة من 8:00 صباحًا حتى 8:00 مساءً كل يوم.

❖ Դուք կարող եք անվճար ստանալ այս փաստաթուղթն այլ ձևաչափերով, օրինակ՝ խոշոր տառատեսակի, բրայլան գրի կամ ձայնագրողային տեսքով: Ձանգահարել՝ (855) 665-4627 (TTY՝ 711), երկուշաբթի - ուրբաթ, 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով: Ձանգն անվճար է:

❖ Կարող եք խնդրել, որ մենք միշտ ձեզ տեղեկատվություն ուղարկենք ձեզ անհրաժեշտ լեզվով կամ ձևաչափով: Սա կոչվում է մշտական պահանջ: Մենք կհետևենք ձեր մշտական պահանջին, այնպես որ ձեզ անհրաժեշտ չլինի առանձին հայցեր ներկայացնել յուրաքանչյուր անգամ, երբ մենք ձեզ տեղեկատվություն ենք ուղարկում: Այս փաստաթուղթը այլընտրանքային ձևաչափով ստանալու համար խնդրում ենք կապվել Մասնակիցների սպասարկման բաժնի հետ՝ (855) 665-4627, (TTY՝711), երկուշաբթի - ուրբաթ, 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով: Եթե ցանկանում եք շարունակել ստանալ փաստաթղթերը անզլերենից բացի այլ լեզվով, խնդրում ենք զանգահարել (800) 541-5555, TTY՝711, երկուշաբթի - ուրբաթ, 8 a.m. - 5 p.m. տեղական ժամանակով՝ ձեր տվյալները նախընտրելի լեզվով թարմացնելու համար: Ներկայացուցիչը կարող է օգնել ձեզ կատարել կամ փոխել մշտական պահանջը: Դուք կարող եք նաև կապ հաստատել Ձեր խնամքի համակարգողի հետ՝ մշտական պահանջի համար օգնություն ստանալու համար:

❖ Ցանկը արդիական է՝ որոնվող առցանց գրացուցակի ներքևի էջում ներկայացված ընթացիկ ամսաթվի դրությամբ, բայց Դուք պետք է իմանաք, որ.

- Molina Dual Options -ի ցանցի որոշ մատակարարներ կարող են ավելացվել կամ հեռացվել մեր ցանցից այս տեղեկամատյանի հրապարակումից հետո:
- Մեր ցանցի որոշ Molina Dual Options -ի մատակարարներ հնարավոր է այլևս չեն կարող ընդունել նոր անդամներ: Եթե Դուք դժվարանում եք գտնել նոր անդամներ ընդունող մատակարար, ապա զանգահարեք Մասնակիցների սպասարկման բաժնի՝ (855) 665-4627, (TTY՝711), երկուշաբթի - ուրբաթ, 8 a.m. - 8 p.m. տեղական ժամանակով և մենք Ձեզ կօգնենք:
- Ձեր շոջանի Molina Dual Options ցանցի մատակարարների վերաբերյալ առավել արդի տեղեկատվություն ստանալու համար այցելեք

MolinaHealthcare.com/Duals կամ զանգահարեք Անդամորի սպասարկման կենտրոն՝ (855) 665-4627, TTY՝ 711, երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով: Չանգն անվճար է:

Molina Dual Options-ի ցանցի բժիշկները և առողջապահության այլ մասնագետները նշված են էջերում, որոնք հիմնված են ձեր Մատակարարի որոնման վրա: Մեր ցանցի Դեղատները նշված են էջերում, որոնք հիմնված են ձեր Դեղատան որոնման վրա:

## Մատակարարներ

### Հիմնական տերմիններ

Այս բաժինը բացատրում է հիմնական տերմինները, որոնք Դուք կտեսնեք մեր *Մատակարարների և դեղատների տեղեկատուում*:

- **Պրովայդերներն** առողջապահական ոլորտի մասնագետներ են և աջակցություն տրամադրողներ, ինչպիսիք են՝ բժիշկները, բուժքույրերը, դեղագործները, թերապևտները և խնամք ու ծառայություններ մատուցող այլ անձինք: **Ծառայություններն** ընդգրկում են՝ բուժօգնությունը, երկարաժամկետ խնամքի ծառայությունները և աջակցությունը (LTSS), նյութերը, վարքագծային առողջապահության ծառայությունները, դեղատոմսով և առանց դեղատոմսի դեղերը, սարքավորումները և այլ ծառայություններ:
  - Տերմինը նաև ներառում է հիվանդանոցները, կլինիկաները և այլ հաստատություններ, որտեղ ձեզ տրամադրվում են բուժապասարկման ծառայություններ, բժշկական սարքավորումներ և երկարաժամկետ խնամքի ծառայություններ և օժանդակում:
  - Մատակարարները, որոնք մեր ծրագրի ցանցի մի մասն են, կոչվում են ցանցային մատակարարներ:
- **Ցանցային մատակարարներն**, այն մատակարարներն են, որոնք մեզ հետ պայմանագիր են կնքել՝ մեր ծրագրում անդամներին ծառայություններ մատուցելու համար: Մեր ցանցում մատակարարները հիմնականում մեզ ուղղակիորեն են հաշիվ ներկայացնում իրենց կողմից ձեզ տրամադրած բուժօգնության դիմաց: Երբ այցելում եք ցանցային մատակարարին, սովորաբար ոչինչ չեք վճարում փոխհատուցվող ծառայությունների համար:
- **Առաջնային բուժօգնության օղակի մատակարար (PCP)** է հանդիսանում բժիշկը, բարձր որակավորմամբ բուժքույրը կամ այլ բուժաշխատողը, որը տրամադրում է ձեզ առօրյա առողջապահական խնամք: Ձեր PCP-ն կպահպանի ձեր բժշկական գրառումները և ժամանակի ընթացքում կձանոթանա ձեր առողջական կարիքներին: Ձեր PCP-ը նաև **ուղեգիր** կտա Ձեզ, եթե ձեզ անհրաժեշտ է այցելել նեղ մասնագետի կամ այլ մատակարարի:

- **Մասնագետներն**, այն բժիշկներն են, որոնք առողջապահական ծառայություններ են մատուցում որոշակի հիվանդության կամ մարմնի մի մասի համար: Գոյություն ունեն մասնագետների շատ տեսակներ: Ահա մի քանի օրինակներ՝
  - Ուռուցքաբանները հոգ են տանում քաղցկեղով հիվանդների մասին:
  - Սրտաբանները հոգ են տանում սրտի խանգարումներ ունեցող հիվանդների մասին
  - Օրթոպեդները ինսամում են ոսկրերի, հոդերի կամ մկանների որոշակի պայմաններով հիվանդների համար:
  
- Ձեզ կարող է անհրաժեշտ լինել **ուղեգիր**՝ մասնագետի կամ Ձեր PCP-ն չհանդիսացող բժշկի այցելելու համար: **Ուղեգիր** նշանակում է, որ ձեր առաջնային բուժօգնության օղակի մատակարարը (PCP) պետք է ձեզ տա հավանություն, Նախքան դուք կկարողանաք այցելել որևէ մեկին, որը Ձեր առաջնային բուժօգնության օղակի մատակարարը չի հանդիսանում: Եթե դուք ուղեգիր չստանաք, Molina Dual Options -ը հնարավոր է չփոխհատուցի ծառայությունները:
  - Ձեր ցանցային PCP-ից ուղեգրեր անհրաժեշտ չեն հետևյալի համար՝
    - Շտապ բուժօգնություն;
    - Շտապ բժշկական օգնություն;
    - Երիկամների դիալիզի ծառայություններ, որոնք դուք ստանում եք Medicare-ի կողմից արտոնագրված դիալիզի հաստատությունից, երբ գտնվում եք պլանի սպասարկման տարածքից դուրս; **կամ**
    - Ծառայություններ կանանց առողջության մասնագետից:
    - Ծառայություններ, որոնք նշված չեն Molina Dual Options -ի Նախնական թույլտվության ցուցակում կամ նշված են որպես Նախնական թույլտվություն չպահանջող ծառայություններ:
  - Ի լրումն, եթե Դուք իրավունք ունեք ստանալ ծառայություններ հնդկական բուժսպասարկման մատակարարներից, ապա կարող եք այցելել այդ մատակարարներին առանց ուղեգրի: Մենք պետք է Հնդկական առողջապահական մատակարարին վճարենք այդ ծառայությունների համար, նույնիսկ եթե դրանք մեր ծրագրի ցանցից դուրս են:
  - Ուղեգրերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ *Մասնակցի ձեռնարկի* 3-րդ գլխում: Կարող եք լրացուցիչ տեղեկության համար կապվել Մասնակիցների սպասարկման բաժնի հետ՝

զանգահարելով՝ (855) 665-4627, TTY՝ 711), երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8 a.m. - - 8 p.m.՝ տեղական ժամանակով:

- Դուք նաև կարող եք կապվել Գործի մենեջերի հետ և բուժօգնության թիմի հետ, որոնք կօգնեն Ձեզ ընտրության հարցում:
  - **Գործերի մենեջերը** կօգնի Ձեզ կառավարել Ձեր բժշկական մատակարարների և ծառայությունների հարցերը:
    - Ձեր **խնամքի թիմը, որը ղեկավարվում է Ձեր Molina Dual Options-ի՝ Գործի կառավարչի** կողմից, կգնահատի ձեր կարիքները՝ պարզելու, թե արդյոք առողջությունից բացի այլ հարցերում օգնության կարիք ունեք, օրինակ՝ ֆիզիկական կամ սոցիալական կարիքներ: Ձեր խնամքի թիմը կազմված է ձեր նախասիրությունների և Ձեզ հետ ընդունված որոշումների հիման վրա: Խնամքի խմբի բոլոր անդամները միասին աշխատում են, որպեսզի ձեր խնամքը համակարգված լինի: Սա նշանակում է, որ նրանք համոզվում են, որ թեստերն ու լաբորատոր հետազոտությունները կատարվել են մեկ անգամ, և արդյունքները կիսվում են համապատասխան մատակարարների հետ: Դա նաև նշանակում է, որ Ձեր PCP-ն պետք է իմանա Ձեր կողմից ընդունվող բոլոր դեղերը, որպեսզի կարողանա նվազեցնել ցանկացած բացասական ազդեցություն: Ձեր PCP-ն միշտ կստանա ձեր թույլտվությունը, նախքան ձեր բժշկական տեղեկությունները այլ մատակարարների հետ կիսելը: Ձեր Molina Dual Options -ի Գործի համակարգողը ձեր կամ շահագրգիռ անձի հետ կմշակի խնամքի ծրագիրը: Խնամքի պլանը կներառի ձեր բոլոր կարիքները, կոնի նպատակներ և կփնտրի ձեր կարիքները բավարարելու մոնիտորինգի եղանակները:
    - Ձեր **խնամքի թիմը** կարող է ներառել, բայց չի սահմանափակվում հետևյալ մարդկանցով՝
      - Առաջնային բուժօգնության մատակարար
      - Մասնագիտացված խնամքի ծառայությունների մատակարար
      - Գրանցված բուժքույրեր (RN)
      - Molina Dual Options -ի Գործի համակարգող
      - Օգտագործման կառավարման անձնակազմ
      - Molina Dual Options -ի Բժշկական տնօրեն
      - Դեղագործներ

## Առաջնային խնամքի մատակարարի (PCP) ընտրություն

Դուք կարող եք ծառայություններ ստանալ ցանկացած մատակարարից, ով մեր ցանցում է և ընդունում է նոր անդամներ:

Նախ, դուք պետք է ընտրեք Առաջնային խնամքի մատակարար (PCP) Յնարավոր է, որ որպես ձեր PCP կարողանաք ունենալ մասնագետի: Մասնագիտությունները ներառում են՝ ներքին հիվանդություններ, մանկաբուժություն, վարակիչ հիվանդություններ, ընտանեկան պրակտիկա, ընդհանուր պրակտիկա և OB/GYN-ներ: Խնդրում ենք զանգահարեք Մասնակիցների սպասարկման բաժին PCP ընտրելու համար:

Մեր պլանի PCP-ները փոխկապակցված են բժշկական խմբերի հետ: Ձեր PCP-ն ընտրելով՝ դուք ընտրում եք նաև փոխկապակցված բժշկական խումբը: Դա նշանակում է, որ Ձեր PCP-ն կուղղորդի Ձեզ մասնագետներին և ծառայություններին, որոնք նույնպես փոխկապակցված են նրա բժշկական խմբի հետ:

- Եթե գոյություն ունի որևէ հատուկ մասնագետ կամ հիվանդանոց, որից ցանկանում եք օգտվել, ապա սկզբում կարևոր է ճշտել՝ արդյոք դրանք կապված են Ձեր PCP-ի բժշկական խմբի հետ: Կարող եք փնտրել այս տեղեկամատյանում կամ խնդրել Molina Dual Options-ի Մասնակիցների սպասարկման բաժնից ստուգել արդյոք Ձեր ուզած PCP-ն ուղեգրեր կատարում է այդ մասնագետին կամ արդյոք օգտվում է այդ հիվանդանոցից:
- Եթե դուք չմնաք Ձեր PCP-ի բժշկական խմբի հետ, ապա Molina Dual Options -ը հնարավոր է չփոխհատուցի ծառայությունները:

PCP ընտրելու համար անցեք մատակարարների ցանկի էջ և ընտրեք մատակարար՝

- որից օգտվում եք հիմա, **կամ**
- ում խորհուրդ է տվել վստահելի մեկը, **կամ**
- ում գրասենյակները ձեզ հեշտ են հասնել:
- Եթե Ձեզ PCP ընտրելու հարցում օգնություն է հարկավոր, խնդրում ենք զանգել Մասնակիցների սպասարկման բաժին հետևյալ հեռախոսահամարով՝ (855) 665-4627, TTY՝ 711), երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով: Չանգն անվճար է: Կամ այցելեք՝ [MolinaHealthcare.com/Duals](http://MolinaHealthcare.com/Duals):
- Եթե ունեք հարցեր այն մասին, թե արդյոք մենք կվճարենք որևէ բժշկական ծառայության կամ խնամքի համար, որը ցանկանում եք կամ ձեզ հարկավոր է, ապա զանգահարեք Մասնակիցների սպասարկման բաժին և խնդրեք **Նախապես** ստանալ ծառայությունը կամ խնամքը:

## Երկարաժամկետ խնամքի և օժանդակման ծառայություններ (LTSS)՝

Որպես Molina Dual Options-ի անդամ՝ Դուք կարող եք ստանալ երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն (LTSS), ինչպիսիք են «Տնային օժանդակ

ծառայությունները» (IHSS), ինչպես նաև ծերանոցում, պարագաներ, Համայնքային ծառայություններ տարեցների համար (CBAS) և այլ ծառայություններ: LTSS -ն օգնում է մարդկանց, ովքեր օգնության կարիք ունեն առօրյա գործեր կատարելիս՝ լոգանք ընդունելիս, հագնվելիս, սնունդ պատրաստելիս և դեղորայք ընդունելիս: Այս ծառայությունների մեծ մասը մատուցվում է ձեր տանը կամ ձեր համայնքում, սակայն կարող են մատուցվել ծերանոցում կամ հիվանդանոցում:

Համայնքների վրա հիմնված մեծահասակների ծառայությունները (CBAS):

CBAS-ը համայնքային առողջության օրակարգային ծրագիր է, որը ծառայություններ է մատուցում տարեց մարդկանց և մեծահասակներին, ովքեր քրոնիկ բժշկական, ճանաչողական կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեն և/կամ հաշմանդամություն ունեցողների համար, որոնք ռիսկային են ինստիտուցիոնալ ինչպես ստանալու համար:

CBAS-ի համար դիմելու համար, խնդրում ենք կապվելք Molina Dual Options-ի Մասնակիցների սպասարկման բաժնի հետ՝ (855) 665-4627, TTY՝ 711), երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով:

Molina Dual Options-ի կողմից տրամադրված այլ երկարաժամկետ ծառայություններն և աջակցությունները ներառում են տնային ինչպես օժանդակ ծառայություններ (IHSS), Համայնքային ծառայություններ տարեցների համար (CBAS), հմուտ բուժքույրական ինչպես, ֆիզիկական թերապիա, աշխատանքային թերապիա, խոսքի թերապիա, բժշկական սոցիալական ծառայություններ և տնային բուժօգնություն:

Այս ծառայությունների ամբողջական ցանկը մատչելի է ձեր *Մասնակից ձեռնարկի* 4-րդ գլխում:

LTSS ծառայություններին մատչելիության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Molina Dual Options Անդամի ծառայությունների կենտրոնին՝ (855) 665-4627 (TTY՝ 711), երկուշաբթի-ուրբաթ, 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով:

### **Ինչպե՞ս բացահայտել Molina Dual Options-ի ցանցային մատակարարին**

Դուք պետք է ստանաք Ձեր բոլոր փոխհատուցվող ծառայությունները մեր ցանցի մատակարարներից, որոնք փոխկապակցված են ձեր PCP-ի բժշկական խմբի հետ: Եթե այցելում եք մատակարարների, որոնք Molina Dual Options-իցանցում ներառված չեն և չեն առնչվում Ձեր PCP-ի բժշկական խմբի հետ (առանց մեր կողմից նախնական թույլտվության կամ հաստատման), ապա ստիպված կլինեք վճարել հաշիվը:

«**Նախնական թույլտվությունը** հաստատում է Molina Dual Options-ից՝ նախքան որոշակի ծառայություն կամ դեղամիջոց ձեռք բերելը կամ ցանցից դուրս մատակարարի այցելելը: Molina Dual Options-ը հնարավոր է չփոխհատուցի դեղի կամ ծառայության համար, եթե Դուք չստանաք այդ համաձայնությունը:

Այս կանոնից բացառություններն այն դեպքերն են, երբ ձեզ հարկավոր է շտապ կամ անհապաղ օգնություն կամ դիալիզ, և չեք կարող այցելել ցանցային մատակարարի, օրինակ,



երբ տնից հեռու եք գտնվում: Medicare-ը և Medicaid-ը չեն փոխհատուցում անհետաձգելի բուժօգնությունը ԱՄՆ-ի և դրա տարածքներից դուրս՝ բացառությամբ առանձին հատուկ դեպքերի: Մանրամասների համար, կապվեք պլանի հետ: Կարող եք նաև դուրս գալ ծրագրից կամ Ձեր PCP-ի բժշկական խմբից, եթե Molina Dual Options-ը նախորդ թույլտվություն տա ձեզ:

Գուցե Ձեզ հարկավոր է ուղեգիր այլ բժիշկի այցելելու համար, ով առաջնային խնամքի մատակարար չի հանդիսանում:

- Դուք կարող եք տարվա ընթացքում ցանկացած ժամանակ ցանցի ներսում փոխել մատակարարներին: Եթե Դուք այցելել եք մեկ ցանցային մատակարարի, պարտադիր չէ, որ շարունակեք այցելել այդ նույն մատակարարին: Դուք կարող եք փոխել ձեր PCP-ին յուրաքանչյուր պահի: Շատ դեպքերում, փոփոխությունները կգործեն հաջորդ օրացուցային ամսվա առաջին օրը: Կարող եմ լինել բացառություններ, եթե դուք ներկայումս ստանում եք բուժում ձեր առաջնային բուժօգնության օղակի մատակարարի փոփոխման պահանջի ժամանակ: Դուք կարող եք փոխել Ձեր PCP-ին Ձեր անձնական կայք էջում MyMolina.com կամ կարող եք դիմել Մասնակիցների սպասարկման բաժին՝ Ձեր Molina Dual Options-ի ցանկացած մատակարարների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու և խնդրել կատարել առաջնային բուժօգնության օղակի մատակարարի PCP փոփոխությունը: Որոշ մատակարարների ծառայություններից օգտվելու համար ձեզ հարկավոր կլինի ուղեգիր ձեր առաջնային օղակի բուժօգնության մատակարարից (բացառությամբ սպասարկման տարածքից դուրս տեղի ունեցած արտակարգ և շտապ բուժօգնության ծառայություններից):
- Հիշեք, որ մեր պլանի PCP-ները փոխկապակցված են բժշկական խմբերի հետ: Եթե դուք փոխում եք ձեր PCP-ին, ապա կարող եք նաև փոխել բժշկական խմբերը: Փոփոխության համար դիմելու դեպքում անպայման այդ մասին տեղեկացրեք Մասնակիցների սպասարկման բաժին անկախ նրանից, արդյոք դիմում եք մասնագետի, թե ստանում եք այլ փոխհատուցվող ծառայություններ, որոնց համար պահանջվում է PCP-ի թույլտվություն: Մասնակիցների սպասարկման բաժինը կօգնի համոզված լինելու, որ առաջնային բուժօգնության օղակի մատակարար փոխելու դեպքում դուք կարող եք շարունակել ստանալ ձեր մասնագիտացված բուժօգնությունը և օգտվել այլ ծառայություններից:
- Molina Dual Options -ն աշխատում է մեր ցանցի բոլոր մատակարարների հետ՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները բավարարելու համար: Ըստ անհրաժեշտության՝ այս տեղեկամատյանի ցանցային մատակարարների ցուցակը ներառում է տեղեկություններ իրենց տրամադրած հարմարությունների մասին:
- Եթե Դուք պետք է այցելեք մատակարարի և վստահ չեք, որ նրանք առաջարկում են Ձեզ անհրաժեշտ հարմարությունները, Molina Dual Options-ը

կարող են օգնել Ձեզ: Օգնություն ստանալու համար խոսեք Ձեր Գործի մենեջերի հետ կամ գանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն՝ (855) 665-4627, TTY՝ 711), երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով:

## **Ինչպե՞ս Ձեր տարածքում գտնել Molina Dual Options-ի ցանցային մատակարարի**

Մատակարարների որոնումը սովորելու համար դիմեք «Որոնման օգնություն - Յաճախ տրվող հարցեր» հղմանը, որը գտնվում է որոնվող առցանց տեղեկամատյանի էջի վերևում:

Molina Dual Options-ի մատակարարի գրացուցակի կոշտ պատճենը խնդրելու համար խնդրում ենք գանգահարել մեր Անդամի ծառայության կենտրոն՝ (855) 665-4627 (TTY՝ 711), երկուշաբթի - ուրբաթ, 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով: Molina Dual Options-ը Ձեզ կուղարկի մատակարարի գրացուցակի տպագիր օրինակը՝ Ձեր հարցումից երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում: Molina Dual Options-ը կարող է հարցնել՝ արդյոք տպագիր փաստաթղթի Ձեր հայցը մեկանգամյա հարցումն է, թե՞ խնդրում եք մատակարարի գրացուցակը մշտապես ստանալ տպագիր տարբերակով: Եթե դա խնդրեք, մատակարարի գրացուցակի տպագիր պատճենների վերաբերյալ Ձեր խնդրանքը մնում է մինչև Molina Dual Options-ից դուրս գալը կամ տպագիր տպագրությունների դադարեցման պահանջը:

## **Ցանցային մատակարարներ**

Molina Dual Optionsցանցի մատակարարների այս տեղեկատունն պարունակում է.

- **Առողջապահական մասնագետներ**, ներառյալ՝ առաջնային խնամքի բժիշկները և մասնագետները
- **Հարմարություններ**, ներառյալ՝ հիվանդանոցները, բուժքույրական հաստատությունները, հմուտ բուժքույրական հաստատությունները, հոգեկան առողջության հաստատությունները և Շտապ օգնության կենտրոնները
- **Աջակցություն տրամադրողներ**, ներառյալ մեծահասակների ցերեկային խնամքի ծառայությունները, օժանդակվող ապրուստ, սպառողներին ուղղված ծառայություններ, տուն առաքվող սնունդ, տնային առողջության գործակալություններ:

Բացի կոնտակտային տեղեկատվությունից, մատակարարների ցուցակները ներառում են նաև մասնագիտություններ և հմտություններ, օրինակ՝ խոսակցական լեզուները կամ մշակութային իրավասության ուսուցման ավարտը:

**Մշակութային իրավասության ուսուցում**, որը տրամադրում է լրացուցիչ ցուցումներ մեր առողջապահական խնամքի ծառայություններ մատուցող մատակարարներին, օգնելու նրանց ավելի լավ հասկանալ ձեր անձնական պատմությունն, արժեքները, և համոզմունքները՝

հարմարեցնելու ծառայությունները ձեր սոցիալական, մշակութային և լեզվական կարիքների բավարարման նպատակով:

## **Ցանցային դեղատներ**

Տեղեկատուի այս մասը ներկայացնում է Molina Dual Options-ի ցանցի դեղատների ցանկը: Այս ցանցային դեղատներն այն դեղատներն են, որոնք համաձայնել են ձեզ տրամադրել դեղատոմսով դեղեր՝ որպես ծրագրի անդամ:

Մենք նաեւ ցուցադրում ենք մեր ցանցում գտնվող դեղատները, բայց մեր սպասարկման տարածությունից դուրս են՝ Los Angeles, Riverside, San Bernardino, San Diego, որտեղ ապրում եք: Դուք կարող եք նաև լրացնել ձեր դեղատոմսերը այս դեղատներում: Լրացուցիչ տեղեկության համար կապ հաստատեք Molina Dual Options-ի հետ՝ (855) 665-4627 (TTY՝ 711), երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m. մինչև 8 p.m.՝ տեղական ժամանակով:

Molina Dual Options-ի անդամները պետք է օգտագործեն ցանցային դեղատներ՝ դեղատոմսով դեղեր ստանալու համար՝ բացառությամբ արտակարգ կամ հրատապ խնամքի իրավիճակներում:

- Եթե Դուք գնում եք ցանցից դուրս գտնվող դեղատուն դեղատոմսեր ստանալու համար, երբ դա արտակարգ իրավիճակ չէ, ստիպված կլինեք Ձեր հաշվին վճարել ծառայության համար:
- Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք Molina Dual Options-ի *Մասնակիցների ձեռնարկը*:

Այս Տեղեկատուն չի կարող ցուցադրել բոլոր ցանցային դեղատները: Մենք կարող էինք մեր ծրագրից ավելացնել կամ հեռացնել ցանցի մի քանի դեղատուն այս տեղեկագիրը հրատարակելուց հետո:

Ձեր շրջանի Molina Dual Options ցանցի մատակարարների վերաբերյալ առավել արդի տեղեկատվություն ստանալու համար այցելեք [MolinaHealthcare.com/Duals](http://MolinaHealthcare.com/Duals) կայքը կամ զանգահարեք Անդամների ծառայությունների կենտրոն՝ (855) 665-4627, TTY՝ 711, երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով: Չանգն անվճար է:

Ձեր դեղատոմսի փոխհատուցման ամբողջական նկարագրությունը ստանալու համար, ներառյալ՝ ձեր դեղատոմսերը լրացնելու եղանակը, խնդրում ենք կարդալ *Մասնակցի ձեռնարկը* և Molina Dual Options-ի *Փոխհատուցվող դեղերի ցանկը*: Փոխհատուցվող դեղերի ցանկը կարող եք գտնել այստեղ՝ [MolinaHealthcare.com/Duals](http://MolinaHealthcare.com/Duals):

## **Ինչպե՞ս բացահայտել Molina Dual Options-ի ցանցային դեղատները**

Մանրածախ դեղատների հետ միասին, Ձեր ծրագրի դեղատների ցանցը ներառում է՝

- Փոստային պատվերով դեղատները փոստով կամ բեռնափոխադրող ընկերությունների միջոցով անդամներին ուղարկում են դեղատոմսով փոխհատուցվող դեղերը:
- Տնային ներարկման դեղատները պատրաստում են դեղատոմսով դեղեր, որոնք տանը հմուտ մատակարարի կողմից ներարկվում են երակի, մկանի միջոցով կամ այլ ոչ ներս ընդունման տարբերակով:
- Երկարատև խնամքի (LTC) դեղատները սպասարկում են երկարատև խնամքի հաստատությունների, ինչպիսիք են ծերանոցները:
- Հնդկական առողջապահական ծառայության/ցեղային/Զաղաքային հնդկական առողջապահական ծրագրի (I/T/U) դեղատներ

Ձեզանից չի պահանջվում շարունակել այցելել նույն դեղատունը՝ Ձեր դեղատոմսերը լրացնելու համար:

### **Դեղատոմսերի երկարաժամկետ մատակարարումներ**

- **Mail-Order Programs՝ Փոստային-պատվերի ծրագրեր.** Մենք առաջարկում ենք փոստով պատվեր իրականացնելու ծրագիր, որը թույլ է տալիս ստանալ մինչև ձեր տուն ուղարկվող ձեր նշանակած դեղերի մինչև 90 օրվա պաշար: 90 օրվա պաշարների առաքումն ունի նույն մեկ ամսվա հավելավճարը:
- **90 օրվա պաշարների առաքման ծրագրեր.** Որոշ մանրածախ դեղատներ կարող են առաջարկել նաև մինչև 90 օրվա ընթացքում փոխհատուցվող դեղատոմսով դեղեր: 90 օրվա պաշարների առաքումն ունի նույն մեկ ամսվա հավելավճարը:

### **Փոստային պատվերով դեղատներ**

Դուք կարող եք դեղատոմսով դեղերի տուն առաքում ձեռք բերել մեր ցանցային փոստի պատվերի առաքման ծրագրի միջոցով, որը կոչվում է CVS Caremark Mail Service Pharmacy Program: Դեղատունը կապվելու է ձեզ հետ հեռախոսով՝ ձեր դեղատոմսերը ուղարկելուց առաջ ձեր հաստատումը ստանալու համար: Եթե մենք ի վիճակի չենք հաստատման համար ձեզ հետ կապ հաստատել, ապա ձեր դեղատոմսը ձեզ չի ուղարկվի:

Սովորաբար, դուք պետք է ակնկալեք, որ Ձեր դեղատոմսի դեղերը կստանաք դեղատան՝ փոստային պատվերը ստանալուց 14 օրվա ընթացքում: Եթե այս ժամանակահատվածում չեք ստանում Ձեր դեղատոմսով դեղը(եր)ը, եթե կցանկանաք չեղարկել ավտոմատ պատվերը, կամ եթե Ձեզ անհրաժեշտ է փոխհատուցում խնդրել այն դեղատոմսերով դեղերի համար, որոնք ստացել եք, բայց չեք ցանկանում կամ դրանք պետք չեն, դիմեք մեզ՝ (866) 270- 3735: ԿԿՄ՝ 711: Ձեր գործի կառավարչի հետ կապ հաստատելու մասին ավելին իմանալու համար կարդացեք Մասնակցի ձեռնարկի գլուխ 5-ը:

## **Տնային ներարկման դեղատներ**

Դուք կարող եք ստանալ տնային ներարկման թերապիա, եթե Molina Dual Options-ը հաստատել է Ձեր դեղատոմսը, և եթե Ձեր դեղատոմսը ստանաք լիազորված բժշկի կողմից:

Տնային ներարկման դեղատները սպասարկում են Molina Dual Options ծառայության տարածքում գտնվող բոլոր շրջանները: Տնային ներարկման ծառայությունների և դեղատների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կապվեք Մասնակիցների սպասարկման բաժնի հետ՝ (855) 665-4627, TTY՝ 711, երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով:

## **Երկարաժամկետ ինամքի դեղատներ**

Երկարաժամկետ ինամքի հաստատության բնակիչները, ինչպիսիք են ծերանոցները, կարող են մուտք գործել իրենց դեղատոմսով դեղերը, որոնք փոխհատուցված են Molina Dual Options-ի կողմից, հաստատության դեղատան կամ այլ ցանցային դեղատան միջոցով: Հատուկ դեպքերում դեղերի փոխհատուցման մասին ավելին իմանալու համար անցե՛ք *Անդամների ձեռնարկի* 5-րդ գլուխը: Երկարաժամկետ ինամքի դեղատները սպասարկում են Molina Dual Options-ի ծառայության տարածքում գտնվող բոլոր շրջանները:

Երկարաժամկետ ինամքի ծառայությունների և դեղատների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կապվեք Մասնակիցների սպասարկման բաժնի հետ՝ (855) 665-4627, TTY՝ 711, երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով:

## **Հնդկական առողջապահական ծառայության/ցեղային/Քաղաքային հնդկական առողջապահական ծրագրի (I/T/U) դեղատներ**

Միայն ամերիկացի բնիկներն ու Այասկայի բնիկները մուտքի իրավունք ունեն Indian Health Service / Tribal / Urban Indian Health Program (I/T/U) դեղատներ Molina Dual Options-ի դեղատների ցանցի միջոցով: Ամերիկացիներից և Այասկայի բնիկներից բացի այլ մարդիկ, հնարավոր է, սահմանափակ պայմաններում (օրինակ՝ արտակարգ իրավիճակներում) կարողանան այցելել այս դեղատները:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Molina Dual Options-ի Անդամի սպասարկման կենտրոն՝ (855) 665-4627 (TTY 711), երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m. - 8 p.m.՝ տեղական ժամանակով:

## **Ինչպե՞ս Ձեր տարածքում գտնել Molina Dual Options-ի դեղատուն**

Ձեր դեղերի փոխհատուցում կարող էք ստանալ մեր ցանցային ցանկացած դեղատներից: Սա ներառում է մեր սպասարկման տարածքից դուրս գտնվող մեր ցանցային դեղատները:

Մեր ցանցում դեղագործական տիպի որոնման համար սկսեք Ձեր ծրագիրը ընտրել էջի վերևում գտնվող «Պլան / ծրագիր»-ի ներքո: Դրանից անմիջապես հետո Դուք հնարավորություն ունեք «Քաղաք», «Նահանգ» կամ «Ինդեքսի կոդ»: Օգտագործելով որոնման տողը՝ կարող էք մուտքագրել «դեղատուն» բառը կամ որևէ դեղատան անունը: Երբ սկսեք տպել, Ձեր որոնմանը համապատասխանող մատակարարների անունների ցանկը կհայտնվի, որտեղից կարող էք ընտրություն կատարել: Որոնվող առցանց գրացուցակում ցուցադրված բոլոր դեղատները հասանելի են մեր ցանցում:

Եթեկան հարցեր վերը նշվածից որևէ մեկի մասին, ինդրում ենք շփման անդամի ծառայությունները կամ այցելել [MolinaHealthcare.com/Duals](https://www.molinahealthcare.com/Duals) կայքը:

H8677\_22\_141\_CAMMPPOD Accepted